

1 + 1



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԵՐԹ 27 հունիսի 2019 թ. թիվ 5 (5)

ՀԱՄԱՏԵՂ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ



Մեր գրուցակիցը Մովսես Մովսիսյանն է: Մենք գրուցում ենք մի շարք արդիական խնդիրների մասին, որոնք կուղորդեն մեզ և կնպաստեն մեր արժեհամակարգի ձևավորմանը, որպեսզի մեր երեխաներն ավելի պարզ պատկերացնեն իրենց տեղն արդի աշխարհում:

Մովսես Վեմիրի Մովսիսյանը ծնվել է 1957թ. հոկտեմբերի 20-ին, Գեղարքունիքի մարզի /Ուխտակուն Կանոյի շրջան/ Գեղարքունիք գյուղում: Նախնական կրթությունը՝ մինչև 8-րդ դասարան, ստացել է հայրենի գյուղում: 1972-1975 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանին կից ֆիզմաթ դպրոցում:

1975թվականին ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի ֆակուլտետ, որտեղ սովորել է 5 տարի եւ այն ավարտել 1980թվականին, գերազանցությամբ: Նրան ուղեգրով պահել են որպես ասիստենտ: Այնուհետև ընդունվել է ասպիրանտուրա:

1990-1991թվականներին պաշտպանել է գիտական թեզ և ստացել գիտությունների թեկնածուի որակավորում, այնուհետև դոցենտի կոչում՝ «Էլեկտրատեխնիկայի տեսական հիմունքներ» ամբիոնում, որտեղ մինչ օրս աշխատում է համա-տեղության կարգով:

1999 թվականից աշխատում է Կրթության ծրագրերի լիցենզավորման գործակալությունում, որն իրականացնում է կրթության ոլորտում հանրակրթական, նախադպրոցական, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի լիցենզավորման գործընթացը: Այժմ նա լիցենզավորման գործակալության պետն է: Լիցենզավորման գործունեության մեկնարկը տրվել է Գեղարքունիքի մարզում:

1985 թվականին Մովսեսյան Միության գիտությունների կոմիտեի կողմից նրան շնորհվել է հեղինակային վկայական 2 գյուտի համար, որոնցից մեկը 1993 թվականին ներդրվել է Դնեպրոպետրովսկի խողովակների գործարանում:

2017 թվականին ԿԳ Ուխտակունի հրամանով պարգևատրվել է «Կրթության ոլորտին մատուցած ծառայությունների համար» ոսկե մեդալով:

Հարց-Ձեզ համարո՞ւմ եք լեռնեցի: Պատասխան- Այո՛, լեռնեցի եմ բնավորությամբ և հոգով, և դա գալիս է ոչ միայն իմ լեռնոտ ծննդավայրից, այլև ծնողներիս դաստիարակությունից, ես հպարտ եմ, որ ազնիվ և հավատարիմ եմ իր արժեքներին:

Հ.- Ո՞ր առարկան եք դպրոցական տարիներին ավելի շատ սիրել:

Պ.- Չսիրած առարկաներ չեն եղել, սովորել եմ հավասար, բայց ինչ էլ որ անես, գեներտիկան, միկնույն է, իր գործը անում է, և ես նախընտրել եմ ճշգրիտ գիտությունը, չնայած կարևոր դեր են խաղացել ճիշտ դաստիարակությունը, ձգտումը, ու-

սուցիչը և նրա մատուցած գիտելիքները:

Հ.- Ինչքանո՞վ է հասարակությունը պատասխանատու նոր սերունդների առաջ պետականաշինության հարցում: Խնդրում եմ գնահատեք 1-5 բալի շրջանակներում:

Պ.- Մինչ հեղափոխությունը կգնահատեի 2,5 բալով, իսկ այժմ 4 բալով:

Հ.- Ի՞նչ կարող եք պահանջել ժամանակակից դպրոցից:

Պ.- Ոչ թե կարող եմ, այլ պարտավոր եմ ու պահանջում եմ օրենքի տառին համապատասխան և լիցենզավորման գործունեությունից բխող պայման-պահանջների ապահովություն: Դա օրենքի պահանջն է:

Հ.- Ի՞նչ է Ձեզ համար առաջընթացը:

Պ.- Հետևողականությունը և ամենակարևորը՝ մարդ լինելը: Մարդ տեսակի մեջ արժևորում եմ հավատարմությունը, որովհետև դա պարտական է խղճին, իսկ խիղճը մարդու մեջ է: Երբ մարդը գտնվում խղճի և մտքի արանքում, գերադասելի է ընտրել խիղճը, քանի որ միտքը հետապնդում է շահին:

Հ.-Կրթական միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացը իրականացնելիս ի՞նչն է համարվում առաջնային:

Պ.- ՀՀ-ում գոյություն ունի լիցենզավորման մասին օրենք, որը տարբերություն չի դնում պետական և ոչ պետական հաստատությունների միջև, այն ընդհանուր է բոլորի համար, և այնտեղ սահմանվում են պարտադիր պայման-պահանջներ, որոնք ապահովելու դեպքում միայն տվյալ հաստատությանը կտրվի գործունեության լիցենզիա:

1. Մանկավարժական կազմի ապահովածություն, որից 80 % պետք է լինի տվյալ հաստատության աշխատողներ:

2. Ուսումնամեթոդական ապահովածություն /իրավական ակտեր/:

3. Ուսումնական տարածքի ապահովում:

Հ.- Ո՞ր դեպքում դպրոցը կամ հաստատությունը կարող է զրկվել կամ չստանալ լիցենզիա: Արդյո՞ք դա կարող է ազդել ուսուցչի որակի վրա:

Պ.- Պայման-պահանջները չապահովելու դեպքում լիցենզիա չի տրվում՝ անկախ գերատեսչական ենթակայությունից և կազմակերպության իրավական ձևից: Իսկ գործունեությունը որակի գնահատման տեխնիկական պահանջներից մեկն են:

Հ.- Յուրաքանչյուր ուստարվա ավարտին ունենում եք հազարավոր շրջանավարտներ, ինչպիսի՞նք եք տեսնում նրանց դերը արդի աշխարհում:

Պ.- Եթե բնութագրելու լինենք, ապա ունենք լավ կազմակերպված, զարգացած տեխնիկայի դարին տիրապետող երիտասարդներ, ուղղակի հետևողականությունը և տրամադրվածությունը դեպի ուսումը ոչ բոլորին է հարիր, որը պայմանավորված է սոցիալական վիճակով: Ունենք շատ լավ, բանիմաց երեխաներ, ովքեր և՛ կրթության, և՛ սպորտի, և՛ մի շարք բնագավառներում իրենց ուրույն տեղն ունեն, ովքեր կարող են համարվել երիտասարդության շարժիչ ուժը:

Հ.- Ո՞րն է ուսուցչի դերը նոր Հայաստանում:

Պ.- Մանկավարժի դերը պետք է արժևորվի հասարակության մեջ, և պետությունը պետք է ստեղծի նախապայմաններ, որպեսզի ուսուցիչը անմագորդ նվիրվի իր աշխատանքին՝ մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու գործում:

Հ.- Որտե՞ղ պետք է վերապատրաստվի ուսուցիչը:

Պ.- Ուսուցիչը պետք է վերապատրաստվի պետության կողմից ստեղծված վերապատրաստման կենտրոններում, որոնք մասնակցել են մրցույթին և

ստացել են գործունեության ծավալման թույլտվությունը:

Հ.- Ի՞նչ է Ձեզ համար ազատությունը:

Պ.- Ազատության չափանիշը մարդ կոչվելն է, ով արժանապատվորեն հարթում է իր կյանքի ուղին, ծավալում ինքնուրույն և անկախ գործունեություն, հասարակության մեջ դրսևորում հարգալից վերաբերմունք:

Հ.- Ի՞նչ է արդարությունը:

Պ.- Դա մեր ապրելակերպն է, որը բխում է մեր մտքից, խղճից և հասարակության կարծիքից:

Հ.- Ի՞նչ է Ձեզ համար հայրենասիրությունը:

Պ.- Հայրենասիրությունը քո տունն է, ընտանիքը: Թերազնահատում եմ այն մարդկանց, ովքեր լքում են իրենց հայրենիքը և մոռացության տալիս իրենց արմատները:

Հ.- Ի՞նչ երազանքներ ունեք:

Պ.- Դրանք բազմաբնույթ են, որոնք կապված են թե՛ հայրենիքի և թե՛ ընտանիքի բարերարության հետ:

Հ.- Ինչի՞ց եք վախենում:

Պ.- Ամենամեծ վախը սուտն է, կեղծիքը, անորոշությունը ցանկացած բնագավառում /պետության մեջ, ընտանիքում/:

Հ.- Դուք Ձեզ համարո՞ւմ եք առաջնորդ կամ իշխանավոր:

Պ.- Իշխանատենչությունը իմ ոճը չէ, և ավելի շատ իմն առաջնորդ եմ համարում, որովհետև դիմացինի նկատմամբ հարգանքը և հավատարմությունը, նրան ուղորդելու կամ սատարելու գաղափարը բերում են առաջնորդության:

Հ.- Մեր դպրոցում սկսում ենք նոր ձևաչափի միջոցառում՝ կազմակերպել հովանավորների խորհուրդ: Դուք պատրա՞ստ եք դառնալ խորհրդի անդամ և աջակցել մեր սկսած գործին:

Պ.- Ես շատ ուրախ եմ այդ միջոցառման կազմակերպման համար և պատրաստ եմ աջակցել մեր դպրոցին:

Հ.- Ի՞նչ խորհուրդ կտաք մեր դպրոցի ուսուցիչներին, ծնողներին, աշակերտներին:

Պ.- Լինել հետևողական կրթաստիարակական համակարգում, կարևորել ուսուցիչ-ծնող-աշակերտ փոխհամագործակցությունը: Շատ աշխատել, շատ զրբեր կարդալ, զբաղվել ինքնակրթությամբ, քանի որ գիտելիքն է ամենամեծ գեները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում Մովսես Մովսիսյանին, որ, զբաղված լինելով հանդերձ, ժամանակ գտավ մեզ հետ զրուցելու: Հուսով ենք, որ նման հնարավորություն կունենանք նաև նոր ուսումնական տարում:



Հարցազրույցը վարեց Ռոգա Հակոբյանը 1

Մեխակ Տիգրանի Ավետիսյանը ծնվել է 1922 թվականին, Կամոյի շրջանի Սարուխան գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը և ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի «Աշխարհագրություն» բաժինը:

Մեխակ Ավետիսյանը ճանաչված և հարգված մարդ է ոչ միայն իր հայրենի գյուղում, այլև ամբողջ Գավառի տարածաշրջանում: Նրան հարգանքով են հիշում նաև Գեղարքունիք գյուղի բնակիչները, քանի որ նա 1946-1947 ուսումնական տարում աշխարհագրություն է դասավանդել գյուղի միջնակարգ դպրոցում: Նա իր գործի նվիրյալն է, շուրջ 70 տարի կրթել ու դաստիարակել է մատաղ սերունդին: Նա իր աշակերտների ձեռքբերումներն ու հաջողությունները համարում է իր աշխարհը: Չի սիրում, երբ իրեն դիմում են պարոնով: Նա միշտ եղել է և կլինի ընկեր Ավետիսյան:

Հարց- Ի՞նչ է Ձեզ համար ուսուցչի մասնագիտությունը:

Պատասխան - Ինձ համար մանկավարժությունը ոչ թե մասնագիտություն է, այլ կոչում, որովհետև ինչպես արվեստագետն է կերտում իր գործը, այնպես էլ ուսուցիչն է կերտում մարդուն: Ես դպրոցում աշխատել եմ 71 տարի, իմ աշխատանքային առօրյան եղել է դպրոցը, հիմա էլ եմ երեխաների հետ շատ կապված. սիրում եմ աշխատել ծոռներին հետ:

Հ.- Որտեղի՞ց և ինչի՞ց եք Դուք էներգիա ստանում:

Պ.- Իմ էներգիայի աղբյուրը լավատեսությունն է, որովհետև ես միշտ տեսնում եմ լավը, չեմ վիստավում, չեմ ընդունում շուտ և կանձմվելը:

Հ.-Սիրո՞ւմ եք գրքեր կարդալ:

Պ.- Ոչ միայն կարդում եմ, այլև գրում. 2018 վականինի հոկտեմբերի 18-ին սկսած գիրք ավարտեցի դեկտեմբերի 19-ին, որը հրատարակվել է 1 ամսվա ընթացքում: Գրքի մի մասը իմ հիշողություններն են, մյուսը՝ իրական պատմություններ:

Հ.- Ուսուցիչը ուժեղ և թույլ կողմեր ունի՞, եթե այո, որո՞նք են դրանք:

Պ.- Ուսուցչի ուժեղ լինելը ոչ թե ֆիզիկական ուժ ունենալն է, այլ գիտական և բարոյական ուժը: Նա թույլ կողմ չպետք է ունենա:



Հ. Ի՞նչ հատկանիշներ պետք է ունենա ուսուցիչը:

Պ. Ուսուցիչ լինելու գլխավոր հատկանիշը ուսման ճիշտ կազմակերպումն է, դաստիարակչական աշխատանքների վրա ուշադրություն դարձնելն է, ծնողի և երեխայի հետ ճիշտ վերաբերմունքն է: Հասարակության մեջ պետք է ուսուցչի դերը կարևորվի: Ուսուցիչը հատուկ մարդ է՝ հատուկ կեցվածքի, հատուկ կազմվածքի, հատուկ բնավորության տեր, և, իհարկե, նա միշտ պիտի լինի կիրք:

Հ. Արդյո՞ք ծնողը ևս ուսուցիչ է:

Պ. Այո, երեխան օրվա մեծ մասը ծնողի հետ է, բնական է, որ նրանց հարաբերությունների հիմքում պետք է լինի ծնող-ուսուցչի դերը: Եթե ընտանիքում այդ համագործակցությունը լավ է լինում, բնական է, արդյունքը լավ կլինի:

Հ. Կրթական համակարգը տարբեր ժամանակաշրջանում տարբեր խնդիրներ է առաջադրում. որո՞նք են դրանք:

Պ. Դժվար հարց է: Խորհրդային կրթական համակարգը, ըստ իս, ավելի լավն էր: Այն պայմանները, որ ուներ խորհրդային դպրոցը, այժմ չունի դպրոցների մեծ մասը: Հիմա դպրոցը չի ֆինանսավորվում այնպես, ինչպես այն ժամանակ էր: Իմ տնօրեն եղած ժամանակ մոր դպրոց կառուցեցինք, այնպես կահավորեցինք, որ անգամ Երևանի դպրոցներից լավագույնն էր:

ուներ ձայնահնչյունային 5 կաբինետ, համակարգչային կաբինետ, որ ոչ մի դպրոցում չկար:

Հ. Ինչպիսի՞ն պետք է լինի վերաբերմունքը դպրոցի նկատմամբ:

Պ.- Պետական վերաբերմունք պիտի լինի: Նախկինում Լուսավորության նախարարությունը անմիջապես վերահսկում էր դպրոցը, հիմա թողել են մարդպետների վերահսկողության տակ, որը, իմ կարծիքով, ճիշտ չէ, այժմ մեր մարզի մարդպետը մասնագիտությամբ մանկավարժ է, և հույս ունեմ, որ նա բարեխիղճ վերաբերմունք կդրսևորի դպրոցների հանդեպ:

Հ. -Մանկավարժական ի՞նչ կոչումներ և պարգևատրումներ ունեք:

Պ. Մեթոդիստ ուսուցիչ եմ, իմ աշխատանքային տարիներին արժանացել եմ «Կարմիր դրոշի շքանշանի», «Լենինի 100 ամյակի», մեդալի և 2 տասնյակից ավելի պատվոգրերի: Մասնակցել եմ Հայրենական մեծ պատերազմին, ունեմ 3 շքանշան և շատ մեդալներ, զինվորական կոչումով կապիտան եմ:

Հ. Ի՞նչ կարծիք ունեք մեր թերթի մասին: Գիշտ է, չեք կարդացել, բայց լսել եք, որ հարևան գյուղի դպրոցը հրատարակում է թերթ:

Պ. Ես ուրախ եմ, որ նման հիանալի գործ եք նախաձեռնել, գովելի է:

Հ. Արդյո՞ք Ձեր կերպարը օրինակ է եղել Ձեր աշակերտների համար:

Պ. Իմ կարծիքով վատ աշակերտ չկա, սիրել եմ բոլորին, չարածիմներից ոմանց մեկ-մեկ ծեծել եմ, եղել եմ պահեր, որ սխալվել եմ, բայց արել եմ ամեն ինչ, որ երեխան գրագետ և դաստիարակված լինի, իմ աշխատանքի արդյունքը լավ լինի:

Հ. Դուք մեկ տարի դասավանդել եք Գեղարքունիքի դպրոցում, ի՞նչ հուշեր ունեք:

Պ. Այո, դա 1946-1947 ուսումնական տարին էր, դպրոցի տնօրենը Տիգրան Արաքունյանն էր: Անցել էր 10 տարի, ես արդեն դպրոցի տնօրեն էի Սարուխանում, երբ հանդիպեցի Գեղարքունիքի դպրոցի տնօրեն Արշավիր Խաչատրյանին: Նա ինձ տվեց իմ դասավանդած դասարանի գրավոր աշխատանքների տետրերը, ես զարմացա, որ այդքան տարի դրանք պահպանվել էին:

Հ. Ի՞նչ նախասիրություն ունեք:

Պ. Սիրում եմ գրքեր գրել: Ես հիմա 97 տարեկան եմ, ինձ շատ են հարգում, ես բոլորի հետ կապված եմ, մեր գյուղում և հարևան գյուղերում իմ հասակին գրեթե մարդ չկա. ուզում եմ, որ իմ ամբողջ շրջապատը ինձ ճանաչի, ունեն նպատակ ավարտելու իմ դասարանցիների մասին պատմող գիրքը և գրելու իմ գործասի մասին: Շատ եմ սիրում կարդալ և ուզում եմ, որ ամբողջ աշխարհը ճանաչի իմ Հայաստան աշխարհը:

Հ. -Ընկեր Ավետիսյան, քանի՞ տարի եք զբաղվել մանկավարժական գործունեությամբ:

Պ. -Շուրջ 71 տարի աշխատել եմ դպրոցում, որից 40-ը՝ տնօրեն և ուսումնական մասի վարիչ, իսկ մնացած տարիները՝ որպես ուսուցիչ:

Հ. -Դուք Ձեզ երջանիկ մարդ համարո՞ւմ եք:

Պ. -Ինչո՞ւ չէ, երջանիկ եմ ծոռներիս հետ, շուտով 100 կլինեմ, գնդակ եմ խաղում, ուրախ եմ, որ ունեմ լավ ընտանիք և ինձ հարգող մարդիկ:

Հ. -Ի՞նչ խորհուրդ կտաք ապագա սերնդին:

Պ.- Սիրե՛ք հայրենիքը, ծնողին և, ամենակարևորը, պահպանե՛ք ձեր ինքնությունը, իսկ ինքնության գրավակա՜նը գիտե՛լիքն է:

Մենք բարի հայացքով ենք նայում և նախանձում ընկեր Ավետիսյանին: Նա այն եզակի մարդկանցից է, որ ունի մարդկությունը ավելի մարդկային դարձնելու բանալին: Ընդհանրապես եմք հայտնում ընկեր Ավետիսյանին, որ համաձայնեց գրուցել մեզ հետ: Ցանկանում ենք նրան առողջություն և հուսով ենք, որ կունենանք ևս մի հնարավորություն մոր թեմաների շուրջ գրուցելու:

Հարցազրույցը վարեց 1+1 թերթի խմբագրությունը

ԻՆՉ Է ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր հարցերին պատասխանում է Վլադիմիր Կոզլով, հոգեբանական ծառայությունների կենտրոնի հիմնադիր նախագահ Վարուժան Մելքոնյանը:

Հարց - Ինչո՞ւ պետք է ընտրել հոգեբանի մասնագիտությունը, և ի՞նչ դեր ունի հոգեբանությունը մեր կյանքում:

Պատասխան - Դժվար է պատկերացնել մի ոլորտ, որտեղ հոգեբանությունը չունենա իր դերը, չնայած այն հաճախ թերագնահատվում կամ երբեմն անգամ գերագնահատվում է շատերի կողմից: Կարծում եմ անհրաժեշտության դեպքում ստեղծված իրավիճակի, ոլորտի հոգեբանական առանձնահատկությունների դիտարկումը ոչ միայն չի խանգարի, այլ նաև նշանակալիորեն կօգնի մարդուն: Հոգեբանի մասնագիտության շուրջ պատվող միջերը բավականին շատ են, ինչը, բնականաբար, բարդացնում է թե ոլորտում աշխատող հոգեբանների, թե մասնագիտությունը ընտրող անձանց աշխատանքը: Բանը նրանում է, որ հոգեբանի կերպարի մասին պատկերացումները հաճախ չեն համապատասխանում իրականությանը: Սա կարող է հիասթափությունների ալիք բարձրացնել բուհի մոտ գործող երիտասարդների մոտ: Սակայն միջերից այն կողմ թաքնված հոգեբանությունը շատ ավելի հետաքրքիր է, իսկ մասնագիտական հեռանկարները՝ բավականին գրավիչ և արդի:

Հարց - Կախվածությունը հոգեբանական խնդիրներին:

Պատասխան - Նախքան հարցին պատասխանելը անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ նկատի ունենք ասելով կախվածություն: Եթե կախվածություն ասելով նկատի ունենք կաչումն ցանկությունը օգտագործել ինչ-որ նյութեր՝ ալկոհոլ, ծխախոտ, թմրանյութ և այլն, կամ մասնակցել կոնկրետ գործողության խաղ, շոփինգ և այլն, ինչը զգում է կյանքի որակը, խանգարում է առօրյա գործունեությանը, ապա՝ այո: Սակայն չպետք է աչքաթող անել այն փաստը, որ կախվածության որոշ դեպքերում անհրաժեշտ է կոմպլեքս մոտեցում, այսինքն՝ մի քանի ոլորտի մասնագետների միաժամանակյա աշխատանքի իրականացում:

Հարց - Ի՞նչ անենք, որ երեխաները չունենան կախվածություն հեռուստացույցից, հեռախոսից, համակարգից:

Պատասխան - Առաջին հերթին պետք է հստակ գիտակցել, որ վերոնշյալ իրերը բոլորովին պարտադիր չէ, որ առաջացնեն կախվածություն: Սակայն նմանատիպ ելքից խուսափելու լավագույն



տարբերակը երեխայի առօրյան առավել հետաքրքիր, տարիքին համապատասխան զբաղմունքներով լցնելն է: Սակայն լցնել բառը պետք չէ բառացիորեն ընկալել, շատ հաճախ ծնողները երեխայի օրը դարձնում են գերծանրաբեռնված, ինչը ևս կարող է բացասական ազդեցություն ունենալ: Բացի այդ, կարելի է սահմանափակել համակարգչով, հեռախոսով զբաղվելու ժամաքանակը՝ նախապես պայմանավորվելով երեխայի հետ:

Հարց - Ունենե՞ք միևնույն հիվանդություն ունեցող 2 անհատ: Բժշկի մոտ գնալիս մեկը հոգեպես պատրաստ է, մյուսը՝ ոչ: Ի՞նչ է դա նշանակում անհատի համար:

Պատասխան - Հարցն արդեն իսկ իր ավարտով հուշում է պատասխանը: Այստեղ կարևոր է հասկանալ, թե մարդը հոգեպես պատրաստ ասելով ինչ նկատի ունի: Բանը նրանում է, որ վիճակը, որը տվյալ մարդու կողմից որակվում է որպես հոգեպես պատրաստ լինել, կարող է առկա լինել մյուսի մոտ ևս, սակայն չհիտարկվել որպես հոգեպես պատրաստություն: Բայց ամեն դեպքում հոգեպես պատրաստ լինել նշանակում է գիտակցել իրավիճակը, տալ արդե-

վալ հակազդումներ, լինել սթրեսակայուն և այլն:

Հարց - Ինչպե՞ս հասկանանք՝ հոգեբանորեն պատրաստ:

Պատասխան - Հոգեբանորեն պատրաստ ասելով հասկանում ենք, որ տվյալ անձը գիտակցել է իր ներքին ռեսուրսները, ունակ է սթափ կերպով զնահատել, վերլուծել իրավիճակը և պատկերացում ունի իր անելիքների և դրանց հնարավորությունների մասին:

Հարց-Ի՞նչ է արժեհամակարգն ըստ հոգեբանի:

Պատասխան-Արժեհամակարգը մարդու կյանքի տարատեսակ ոլորտների նկատմամբ վերաբերմունքի, պատկերացումների, բարոյական նորմերի ամբողջությունն է, որն ազդեցություն ունի անձի կյանքի ոճի, կյանքի որակի վրա և հիմք է հանդիսանում նրա ընտրությունների, որոշումների, գործունեության համար:

Հարց-Հոգեբանության մեջ ինչպե՞ս է ձևավորվում անձի արժեհամակարգը:

Պատասխան-Եթե նկատի ունենք թե ինչպես է ձևավորվում անձի արժեհամակարգը, ապա այն, բնականաբար, ազդեցություն է կրում իր անցած փորձից, որն իր մեջ ներառում է նրա ստացած ընտանեկան նորմերը, ապրած տարբեր իրավիճակները, կարդացած գրքերն ու նայած ֆիլմերը, շփումները, զգացողությունները.....:

Հարց-Ինչպե՞ս տարբերել ճիշտը և սխալը:

Պատասխան- Հոգեբանության տեսանկյունից որպես այդպիսին չենք տարանջատում ճիշտն ու սխալը և, եթե ավելի փիլիսոփայորեն մոտենանք, ապա ինչ ասել է ճիշտ և սխալ, և արդյո՞ք դրանք գոյություն ունեն:

Հարց- Շատախոսությունը հոգեբանական խնդիր է:

Պատասխան-Ոչ: Նախ հասկանանք, թե որն է խոսքի սահմանը: Եվ բացի այդ, նայած թե ինչն է անձի մոտ հանդիսանում շատախոսության պատճառ. գուցե տագնապում է, ինչը հոգեբանական խնդիր է, գուցե ինչ-որ բան է թաքցնում, և դա դրսևորվում է շատախոսությամբ, կամ գուցե պարզապես դա հետևանքն է նրա խառնվածքի, տեսակի:

Հարց-Մենք դժգոհում ենք, որ աղքատ ենք, չենք կարողանում ապրել, բայց անընդհատ խնջություններ, ցուցամոլություն. դա հոգեբանական խնդիր է:

Պատասխան-Մենք չենք կարող ցանկացած երևույթ, որը մեկ ուրիշին դուր չի գալիս, համարել հոգեբանական խնդիր:

/շարունակությունը՝ էջ 3-ում/

1814 թ. Հակոբը, որի մականունը եղել է Յաղուբ, քանի որ թուրքերը չեն կարողացել ասել Հակոբ, ասել են Յաղուբ, գաղթել է Հին Բայազետից և բնակության հաստատել Բաշքենդում: Նա ունեցել է 5 որդի՝ Գևորգ, Ստեփան, Առաքել, Ավետիս, Թաթու:

Գևորգը ունեցել է 3 տղա՝ Բաղդասար, Մելիք, Գասպար:

Բաղդասարն ունեցել է 2 որդի՝ Հայրիկը և Հակոբը, և 4 աղջիկ: Հայրիկը ունեցել է 5 ժառանգ՝ Մեխակ, Մերյոժա, Ռադիկ, Ավետիք, Միշա:

Մեխակը ունեցել է 3 որդի՝ Ժորան, Նորիկը, Շուրիկը: Մերյոժան ունեցել է 4 որդի՝ Աշոտը, Յուրիկը, Էդիկը, Իշխանը: Աշոտը ունեցել է 3 տղա՝ Պավել, Ջիվան, Վանիկ: Յուրիկը ունեցել է 1 տղա՝ Արծրունը, և 2 աղջիկ: Էդիկը ունեցել է 2 որդի՝ Սերյոժան և Արսենը: Շահենը ունեցել է 2 որդի՝ Ռադիկը և Արծրունը: Մուշեղը ունեցել է 2 ժառանգ՝ Պանդուխտը և Արթուրը:

Միշան ունեցել է 2 տղա՝ Արմենը և Յուրիկը: Ավետիքը ունեցել է 2 տղա՝ Հայկը և Սաշան: Սաշան ապրում է ՌԴ-ում, իսկ Հայկը մահացել է երկրային կյանքում թողնելով մեկ տղա և մեկ աղջիկ:

Մելիքն ունեցել է 1 տղա՝ Մեդրակը: Մեդրակն ունեցել է 2 որդի՝ Գևորգը և Վանուշը: Գևորգն ունեցել է 3 տղա՝ Սեդրակը, Աշոտը և Մայիսը: Վանուշն ունեցել է 4 որդի՝ Սամվելը, Մերուժը, Միհրանը և Գառնիկը: Սամվելն ունեցել է 1 որդի՝ Վանուշը: Մերուժն ունեցել է 1 որդի՝ Մարտիրոսը, որը մահացել է, Գառնիկն ունի մեկ որդի՝ Արտակը: Գասպարն ունեցել է 2 տղա՝ Ալեքը և Խաչատուրը: Ալեքն ունեցել է 3 աղջիկ, իսկ Խաչատուրը 7 տղա՝ Գուրգեն, Բաբկեն, Մայիս, Սարգիս, Նորիկ, Ջավեն, Վազգեն: Վազգենն ունեցել է 1 որդի՝ Արմենը: Բաբկենն ունեցել է 1 որդի՝ Գևորգը: Ստեփանն ունեցել է 2 տղա՝ Ներսեսը և Մաթոսը: Ներսեսը ժառանգ չի ունեցել, իսկ Մաթոսն ունեցել է 4 ժառանգ՝ Վարանգյուլ, Մամիկոն, Մանվել և Գևորգ: Վարանգյուլն ունեցել է 2 որդի՝ Ստյոպան և Շեկոն: Շեկոն ունեցել է 1 որդի՝ Վարդանը, իսկ Ստյոպանը 4 որդի՝ Անդրանիկը, Արմենը, Տիգրանը, Արսենը: Մամիկոնն ունեցել է 3 որդի՝ Մարգարիտը, Գևորգը և Ավետիքը: Մարգարիտն ունեցել է 1 տղա՝ Գոռը: Գևորգը, որը բնակվում է գյուղում, մախկին ոստիկան է, ով հիմա զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով, ունի 2 որդի՝ Վարդենը և Արմենը, ովքեր բնակվում են ՌԴ-ում: Ավետիքն ունի 1 որդի՝ Վարդանը, ով զոհվել է բանակում: Մանվելն ունեցել է 2 որդի՝ Արայիկը և Մաթոսը: Մաթոսն ունեցել է 1 որդի՝ Մանվելը: Արայիկն ունեցել է 1 որդի՝ Հակոբը:

Առաքելն ունեցել է 4 որդի՝ Սկրտիչը, Արշակը, Հովհաննեսը, Հայրապետը:

Սկրտիչն ունեցել է 2 որդի՝ Ասատուր և Խաչիկ: Արշակն ունեցել է 2 որդի՝ Սկրտիչ, Ասպատուր: Սկրտիչը ժառանգ չի ունեցել, իսկ Ասպատուրն ունեցել է 2 ժառանգ՝ Գառնիկը և Սկրտիչը: Վերջինիս կոչել է եղբոր անունով: Հովհաննեսն ունեցել է 5 որդի՝ Վասի-



լը, Արտուշը, Պարույրը, Ռազմիկը, Իվանը: Վասիկն ունեցել է 2 որդի՝ Շահենը և Մերյոժան: Շահենը բնակվում է գյուղում, աշխատում է զագի հիմնարկում, ունի 1 որդի՝ Շիրակը, ով բնակվում է Երևանում: Մերյոժան ունի 2 որդի՝ Գնելը և Արտակը: Արտուշն ունեցել է 2 որդի՝ Գևորգը և Բորիսը:

Գևորգը ժառանգ չունի, իսկ Բորիսն ունի 3 որդի՝ Վահրամ, Վահան, Վահագն:

Պարույրն ունեցել է 2 որդի՝ Մերուժանը և Հայկը: Մերուժանն ունի մեկ որդի՝ Պարույրը, Հայկը՝ 1 որդի՝ Հովհաննեսը:

Ռազմիկն ունեցել է 2 որդի՝ Մանուկ և Լարվենտ: Մանուկն ունեցել է 1 որդի՝ Արտյոնը: Իվանն ունեցել է 5 որդի՝ Հովհաննեսը, Հայրապետը, Սկրտիչը, Հակոբը, Արայիկը: Ավետիսն ունեցել է 4 ժառանգ՝ Խաչատուրը, Հակոբը, Մանուկը, Սարգիսը:

Հակոբը ունեցել է 3 որդի՝ Մեխակը, Գվիդոնը, Հայկարամը, Սարգիսը:

Մեխակն ունեցել է 6 որդի՝ Գառնիկ, Իշխան, Աշոտ, Վարդան, Վանիկ, Վահան: Իշխանն ունեցել է 1 որդի՝ Վալդոնը:

Աշոտն ունի 1 որդի՝ Սարգիսը:

Գվիդոնը երկար տարիներ աշխատել է գյուղապետարանում, ունեցել է 3 որդի՝ Սաշա, Լյովա, Միշա:

Սաշան ունեցել է 2 որդի՝ Հակոբը և Գևորգը:

Հակոբը ապրում է գյուղում, մասնագիտությամբ քարտաշ է:

Գևորգը ապրում է ՌԴ-ում: Լյովան ունեցել է 1 որդի՝ Արմենը:

Միշան ունեցել է 1 որդի՝ Գագիկը: Հայկարամը ունեցել է 2 որդի:

Մանուկն ունեցել է 1 որդի՝ Եղիշը: Եղիշը ունեցել է 3 որդի՝ Մաթոս, Ռաֆիկ, Հենդո: Ռաֆիկը ունեցել է 2 որդի՝ Արտակը և Արայիկը: Հենդոն ունեցել է 2 որդի՝ Միհրոնը և Արմանը: Միհրոնը ապրում է ՌԴ-ում, իսկ Արմանը՝ գյուղում: Սարգիսը ունեցել է 1 որդի՝

Բառեղամը, ով պատերազմից չի վերադարձել: Խաչատուրն ունեցել է 5 որդի՝ Վանո, Թաթոս, Արտուշ, Երվանդ, Գարեգին:

Վանոն ունեցել է 3 որդի՝ Հրայրը, Ավետիքը, Մերուժանը: Հրայրը բնակվում է գյուղում, ունի 2 որդի՝ Սևակը և Վահագնը: Սևակը բնակվում է գյուղում, աշխատում է գյուղապետարանում: Վահագնը բնակվում է ՌԴ-ում: Մերուժանը ունեցել է 1 որդի՝ Վանիկը: Նա բնակվում է ՌԴ-ում: Ավետիքն ունեցել է 2 որդի՝ Արմենը և Արտյոնը: Թաթոսն ունեցել է 1 որդի՝ Պարզևը, ով բնակվում է ՌԴ-ում, ունի 2 որդի՝ Գնելը և Գարիկը, նրանք ևս ապրում են ՌԴ-ում: Արտուշը ունեցել է 2 որդի՝ Թորգոմը և Ֆելիքսը: Թորգոմն ունեցել է 1 որդի՝ Արթուրը: Ֆելիքսն ունեցել է 1 որդի՝ Խաչիկը: Երվանդն ունեցել է 3 որդի՝ Վարդանը, Ռաֆիկը, Գագիկը: Վարդանը բնակվում է գյուղում, ունի 2 որդի՝ Հարությունը և Հակոբը, նրանք ևս բնակվում են գյուղում: Ռաֆիկն ունեցել է 1 որդի՝ Գևորգը, նրանք բնակվում են ՌԴ-ում: Գագիկն ունեցել է 2 որդի՝ Երվանդը և Կարենը: Գարեգինն ունեցել է 5 որդի՝ Արամայիս, Թորգոմ, Վազգեն, Արարատ, Կոլյա:

Արամայիսն ունեցել է 2 որդի՝ Վարուժանը և Արմենը: Վարուժանը մահացել է, իսկ Արմենը բնակվում է գյուղում: Վաչոն ունեցել է 1 որդի՝ Սարգիսը, ով բնակվում է գյուղում: Վազգենն ունեցել է 2 որդի՝ Անդրանիկը և Արթուրը:

Արարատն ունեցել է 3 որդի՝ Աշոտը, Տիգրանը, Վարդանը:

Աշոտն ունեցել է 1 որդի՝ Արարատը: Տիգրանն ունեցել է 3 որդի՝ Գևորգը, Մուշեղը, Հայկը: Վարդանն ունեցել է 2 որդի՝ Գարիկը և Խաչատուրը:

Կոլյան ունեցել է 3 որդի՝ Միհրը, Ռուբիկը, Սամվելը: Սամվելն ունեցել է 3 որդի՝ Սրայիկոն, Օհանը, Եղիազարը: Օհանն ունեցել է 4 որդի՝ Խաչատուրը, Գորգին, Թորգոմը, Արսենը: Խաչատուրն ունեցել է 1 որդի՝ Ռազմիկը: Գորգին ունեցել է 2 որդի՝ Միշան և Հրանտը:

Միշան ունեցել է 2 որդի՝ Պարզևը և Գորգին: Պարզևը բնակվում է գյուղում:

Հրանտն ունեցել է 1 որդի՝ Արմենը: Թորգոմն ունեցել է 2 որդի՝ Սամվելը, Մանվելը: Արսենը՝ 2 որդի՝ Վազգեն, Ջավեն: Ջավենն ունեցել է 2 որդի՝ Արսենը, Լյովան: Լյովան ունեցել է 2 որդի՝ Վազգենը և Ջավենը:

Եղիազարն ունեցել է 2 որդի՝ Հայրիկը և Բենոն: Հայրիկն ունեցել է 1 որդի՝ Պարզևը:

Յաղուբի տոհմը շատ մեծ է: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են շատերը, նրանցից շատերը չեն վերադարձել: Ոմանք հասել են մինչև Բեռլին: Ազգուն կան շատ շնորհալիներ, ովքեր իրենց ներդրումն ունեն հայրենիքի գարգացման գործում: Նրանցից շատերը հեռացել են գյուղից և բնակություն հաստատել Հայաստանի տարբեր բնակավայրերում և Ռուսաստանում:

Սարիամ Մանուկյան
10-րդ դասարան

ԻՆՉ Է ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ասիկը՝ էջ 2-ում/

Շատ կարևոր է հիշել, որ ինչ-որ երևույթ կարող է համարվել խնդիր, եթե այն տվյալ մարդու կողմից ընկալվում է առօրյա կյանքից, հարաբերություններին խանգարող: Մեզ համար կարևոր է դիտարկել մի շարք գործոններ՝ հասկանալու համար արդյո՞ք արժե որևէ երևույթ որակել որպես խնդրային:

Հարց-Կարո՞ղ ենք ասել, որ ձևակառուցությունը և ցուցանիշությունը համարժեք են:

Պատասխան-Կախված է նրանից, թե որ կողմերից ենք դիտարկում այս երկու հասկացությունները: Որոշ դեպքերում ձևակառուցությունը և ցուցանիշությունը կարող են համարժեք լինել, որոշ դեպքերում՝ բնութագրել իրարից տարբեր երևույթներ:

Հարց-Ասում ենք, որ մենք հայրենասեր ժողովուրդ ենք, բայց լքում ենք մեր հայրենիքը, դա կարո՞ղ է խոսել հոգեբանական խնդրի առկայության մասին:

Պատասխան-Ո՛չ: Մենք չենք կարող հայրենասիրությունը դիտարկել միայն երկիրը չլքելու կոնտեքստում: Հայրենասիրությունը բավականին արատալիտ հասկացությունն է, ինչն իր մեջ կարող է ներառել մի շարք հասկացություններ և երևույթներ: Միայն երկիրը լքելը չի կարող խոսել հայրենասիրության բացակայության կամ առավել ևս հոգեբանական խնդրի առկայության մասին:

Հարց-Ինչ՞ու ենք մենք վախենում ճշմարտությունից:

Պատասխան-Հարցը հնչում է շատ միանշանակ, ինչը ևս դեմ է հոգեբանության ընդհանուր դրույթներին, քանի որ մենք՝ հոգեբաններս, գիտենք, որ որպես այդպիսին չկան համընդհանուր պնդումներ, և գուցե Պողոսը վախենում է ճշմարտությունից, իսկ Պետրոսը ձգտում է դրան: Սակայն, ինչ խոսք, հնարավոր է գտնել մարդկանց մի ստվար զանգված, որ խուսափում կամ վախենում է ճշմար-

տությունից, ինչը կարող է ունենալ ամենատարբեր դրոշմապատճառներ՝ սկսած ինքնապաշտպանական հակազդումից, վերջացած կոմֆորտ զոնայից դուրս գալու ռիսկից:

Հարց-Հոգեբանությունը կոտորո՞ւմ է կարծրատիպերը:

Պատասխան-Կարծրատիպերը կոտորում և ստեղծում են մարդիկ: Իսկ եթե հարցն ընկալենք ուղիղ կերպով, այս հոգեբանություն գիտության ուսումնասիրությունը կարող է հիմք հանդիսանալ որոշ կարծրացած պատկերացումները վերանայելուն և արդյունքում գուցե անզան՝ փոխելուն:

Հարց-Ինչպե՞ս է հոգեբանը նպաստում մասնագիտական կողմնորոշմանը:

Պատասխան-Մասնագիտության ընտրության հարցը բավականին բարդ կարող է լինել դեռահասի համար, ով գուցե անզան ծանոթ չէ այն մասնագիտությունների ցանկին, որոնք կարող են իրեն առավել համապատասխան լինել: Բանը նրանում է, որ մենք բոլորս էլ ունենք որակներ, որոնք կարող են առավել համապատասխան լինել կոնկրետ մասնագիտության տեսակներին: Հոգեբանության մեջ առկա են մի շարք գործիքներ, որոնց միջոցով հնարավոր է դուրս հանել անհատի այն որակները, որոնք առավել զարգացած են և կարող են օգտակար լինել կոնկրետ մասնագիտության համար՝ հնարավորություն տալով առավել մեծ հաջողությունների հասնել տվյալ ոլորտում: Նմանատիպ աշխատանքների միջոցով հնարավոր է լինում անձին ներկայացնել իր հնարավորությունները և դրանց համապատասխանող մասնագիտությունների ցանկը:

Հարցազրույցը վարեց Ռոզա Հակոբյանը Հարցազրույցին մասնակցեցին հոգեբաններ Էմմա Սանամյանը, Նարե Հովհաննիսյանը:

ՇԱՌԱՅՈՒՄ ԵՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ



Վոլոդյա Այվազյան

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները շնորհավորում են նույն դպրոցի շրջանավարտներ, այժմ Հայոց բանակի զինվորներ Վոլոդյա Համլետի Այվազյանին և Արման Վոլոդյայի Առաքելյանին ծննդյան օրվա առթիվ:



Արման Առաքելյան

Մենք հպարտ ենք, որ մեր գյուղացիները պատվով են կատարում իրենց պարտքը, ցանկանում ենք անփորձանք ծառայություն և բարի վերադարձ:

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

2019 թվականի հունիսի 21-ին ՀՀ ակադեմիայում անցկացվեց աղջիկների ֆուտբոլային մրցաշար, որին մասնակցում էին GOALS-ի առաջնություններից առաջին տեղ գրաված ութ մարզերը ներկայացնող թիմերը: Գեղարքունիքի մարզը ներկայացրեց Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի աղջիկների ֆուտբոլի թիմը:

GOALS հասարակական կազմակերպության նախագահ Լորիկ Չարուբյանը նշեց, որ իրենք ներկայացնում են հայ աղջիկների առաջնությունը ֆուտբոլում կամ GOALS հասարակական կազմակերպությունը, որը հիմնադրվել է 2016 թվականին, և որի նպատակն է՝ աղջիկների համար ստեղծել ֆուտբոլային խմբակներ և



առաջնություններ Հայաստանում, մանավանդ՝ մարզերում: GOALS-ի շրջանակներում ֆուտբոլ են խաղում 12-17 տարեկան 754 աղջիկ: Նպատակն է աջակցել և հնարավորություն տալ աղջիկներին խաղալ ֆուտբոլ: Լորիկ Չարուբյանը նշեց, որ ունեն ամառային ճամբարներ, ուսուցողական վերապատրաստման դասընթացներ, որոնք սովորեցնում են սոցիալական խնդիրներ լուծել սպորտի միջոցով:

Մրցաշարին մասնակցեցին 96 խաղացողներ, ովքեր մրցեցին GOALS-ի տարվա մրցանակի համարի:

Մրցաշարային հաշվարկում Գեղարքունիքի աղջիկների ֆուտբոլի թիմը զբաղեցրեց հինգերորդ հորիզոնականը:

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ՝ «ՄԵՂՈՒ» և «ԿԵՆԳՈՒՐՈՒ» ԱՏՈՒԳԱՏԵՍՆԵՐՈՒՄ



Ամփոփվեցին 2018-2019 ուստարվա «Մեղու» և «Կենգուրու» մրցույթի արդյունքները: Գեղարքունիքի միջնակարգ դպրոցն արդեն հինգ տարի մասնակցում է վերոնշյալ մրցույթներին, և դպրոցի աշակերտներից շատերը դարձել են մրցանակակիրներ:

Այս տարի մրցույթին վաստակած միավորներով, լրացուցիչ թեստավորման և անհատական գրույցների արդյունքներով 11-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Գրիգորյանը

ճանաչվեց «Մեղու» մրցույթի հաղթող, իսկ 8-րդ դասարանի աշակերտուհի Մերի Գրիգորյանը՝ լավագույն մրցանակակիր և «Մեղու», և «Կենգուրու» մրցույթներից:

2019 թվականի հունիսի 18-ին Գավառի ավագ դպրոցում տեղի ունեցավ մրցանակաբաշխություն, որտեղ մեր աշակերտները ստացան իրենց մրցանակները:

ՔՆՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ



Մեկնարկեցին 2018-2019 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունները 9-րդ և 12-րդ դասարանների և գիտելիքների ստուգումները 4-րդ դասարանում՝ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի թվով 22 աշակերտներ կենտրոնացված քննություն հանձնեցին «Հայոց լեզու» առարկայից: Քննական կենտրոն էր ընտրվել Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: Մեր աշակերտները չունեցան անբավարար գնահատականներ: 9-րդ դասարանցիներն իրենց դպրոցում ավարտական քն-

նություններ հանձնեցին «Ֆիզկուլտուրա», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Բնագիտություն» /Ֆիզիկա, Աշխարհագրություն, Կենսաբանություն/, «Օտար լեզու» /ռուսերեն, անգլերեն/, առարկաներից:

12-րդ դասարանի աշակերտները պետական ավարտական քննություններ հանձնեցին «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» առարկաներից: Դպրոցի աշակերտների քննական արդյունքները դրական են: 12-րդ դասարանի աշակերտների երկուսը՝ Սերգեյ Աբրահամյանը և Արամայիս Ավետիսյանը, մասնակցեցին նաև միասնական քննություններին:



Հարգելի՛ համագյուղացիներ, Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթին տրված ձեր հարցազրույցները մեր դպրոցականների համար ինքնահաստատման դաս են, որով մեր երեխաները ձեր կողմից տրված նյութերը շարադրում են իրենց հայացքների և ընկալումների շրջանակում, ավելի համառոտ ձևով: Մենք ներողություն ենք խնդրում, եթե չենք մանրամասնում այն, ինչի մասին մանրամասն խոսել եք դուք:

Հարգանքով Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթի խմբագրություն:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հունիսի 16-ին մեր թերթի կողմից կազմակերպվելու է «Աշխարհը իմ աչքերով», ֆոտոգիրք կրող մարզային լուսանկարչական մրցույթ-ցուցահանդես:

Ժուրիի կողմից ընտրված լավագույն լուսանկարը կարժանանա մրցանակի: Ցանկացողները կարող են դիմել՝ «Հայստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց», ՊՈԱԿ ֆոտոդիմ:

Հեռախոս՝ 093 91 96 58

4 «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 06. 2019 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝
Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 500
Հեռախոս՝ 093919658:
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru